

## «Ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/1

29 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Հայոուսկոգեներացիա» ՓԲԸ 03.09.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 0219 որոշման դեմ:

### **«Հայոուսկոգեներացիա» ՓԲԸ բողոքում բերված փաստարկները.**

Ա.թ. սեպտեմբերի 1-ին «Հայոուսկոգեներացիա» ՓԲԸ-ն ստացել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015թ. թիվ 0219 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի «Հայոուսկոգեներացիա» ՓԲԸ-ից (այսուհետ նաև ընկերություն) ենթակա է գանձման 3584008 դրամ պարտավորության գումար:

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015թ. թիվ 0219 որոշումն ենթակա է առոչինչ ճանաչման և վերացման, հետևյալ պատճառաբանությամբ:

Որոշումը կայացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ, 19-րդ, 30-րդ հոդվածների պահանջների խախտմամբ: Մասնավորապես, Ընկերությունը տեղյակ չի եղել վարչական վարույթի որևէ փուլի մասին: Որոշման ներածական մասում նշվում է. «... «Հայոուսկոգեներացիա» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը»:

Հարկ է նշել, որ Ընկերությունն ոչ թե սահմանափակ պատասխանատվության ընկերություն է, այլ փակ բաժնետիրական ընկերություն: Այս երկու տնտեսավարող սուբյեկտների մեջ, անշուշտ, առկա է իրավական կարգավիճակների տարբերություն: Ընկերությանը երբևէ չեն ծանուցել վարչական վարույթի հարուցման, կասեցման և վերսկսման մասին, որը պարտադիր է:

Խախտվել են նաև Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի և 38-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ Ընկերությունն երբևէ չի ծանուցվել վարչական վարույթի հարուցման մասին, Որոշումը կայացնելիս չի ապահովվել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, չի բացահայտել գործի բոլոր հանգամանքները, ընկերությանը հնարավորություն չի տրվել արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Ավելին, բողոքարկվող վարչական ակտի հիմքում դրվել է մի հանգամանք, որը չի համապատասխանում իրականությանը, այն է՝ 21.20.2013թ. թիվ 1423517 ստուգման ակտը: Նման ստուգման ակտ ընկերության նկատմամբ երբևէ չի կայացվել:

Ինչ վերաբերում է բողոքարկվող վարչական ակտի հիմքում դրված՝ 27.09.2013թ-ին կազմված թիվ 1002942 ստուգման ակտին, ապա հարկ է նշել, որ այս ակտը Օրենքի ուժով կասեցված է, քանի որ ՀՀ վարչական դատարանը /վարչական թիվ ՎՂ/11054/05/13 գործ/, 04.12.2013թ. վարույթ է ընդունել ընկերության հայցն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 27.09.2013թ-ին կազմված թիվ 1002942 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Մինչդեռ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը

մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակա) կայացնելը:

Ինչպես նշվեց ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել ընկերության հայցը՝ 27.09.2013թ-ին կազմված թիվ 1002942 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Այսինքն, մինչև արդարադատություն չիրականացվի վարչական այս գործով, վարչական մարմինը չի կարող 27.09.2013թ-ին կազմված թիվ 1002942 ստուգման ակտի հիմքով լրացուցիչ պարտավորություններ սահմանել ընկերության համար:

Բողոքարկվող ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, քանի որ այս վիճելի իրավահարաբերության կարգավորումը գտնվում է դատարանի տիրույթում:

Վերոգրյալի հիմքով, ընկերությունը խնդրում է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015թ. թիվ 0219 որոշումը ճանաչել առոչինչ ու վերացնել այն:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 27.08.2015 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 3.584.008 դրամ, որից ստուգման ակտի տուգանք 990.000 դրամ, որն առաջացել է 21.10.2013 թ-ի թիվ 1423517 ստուգման ակտից, ստուգման ակտի 10% 2.593.645 դրամ, որն առաջացել է 27.09.2013 թ-ի թիվ 1002942 ստուգման ակտից, եկամտային հարկ 349 դրամ: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 27.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 0219 որոշումը «Հայռուսկոգեներացիա» ՓԲԸ-ից 3.584.008 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Բողոքում բերված պնդումների վերաբերյալ, որ ընկերությանը չի ծանուցվել վարչական վարույթի հարուցման մասին, ընկերությանը հնարավորություն չի տրվել արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, հարկ է նշել հետևյալը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը

նպատակաճշակ է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Քննարկվող դեպքում հարկ վճարողից ժամանակին չվճարված պարտավորությունների գումարները գանձելու նպատակով հարուցված վարչական վարույթի մասին գանգատաբերին ծանուցելու պարտականություն չի առաջացել, քանի որ Որոշումն ընդունվել է հարկային մարմնում առկա ապացույցների հիման վրա, երբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցել երեք օրը:

Հարկ է նշել նաև, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Վարչական ակտը պետք է պարունակի՝

...

բ) վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը. »:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 0219 որոշման մեջ սխալ է նշված որոշման հասցեատիրոջ անվանումը: Մասնավորապես, սխալ է նշված ընկերության կազմակերպատիրական տեսակը՝ «Հայրուսկոգեներացիա» ՓԲԸ-ի փոխարեն նշված է «Հայրուսկոգեներացիա» ՍՊԸ:

Որոշման համաձայն 27.08.2015 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 3.584.008 դրամ, որից 990.000 դրամն առաջացել է 21.10.2013 թ-ի թիվ 1423517 ստուգման ակտից: Ընկերությունը պնդում է, որ նման ակտ «Հայրուսկոգեներացիա» ՓԲԸ-ի նկատմամբ երբևէ չի կազմվել:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 7-րդ բաժնի պետի կողմից 21.10.2013 թ-ին ընդունվել է հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1423517 վարչական ակտը, որով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված 4-ով սահմանված կարգի պահանջների խախտման համար ընկերության նկատմամբ կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 451.000 դրամ: Ընդ որում, նշված վարչական ակտը ստորագրվել և կնքվել է ընկերության տնօրենի կողմից:

Վերոգրյալից հետևում է, որ բողոքում բերված պնդումներն այն մասին, որ «Հայրուսկոգեներացիա» ՓԲԸ-ի նկատմամբ 21.10.2013 թ-ի թիվ 1423517 ակտ չի կազմվել, հիմնավոր չեն:

Որոշման մեջ նշված է նաև, որ 3.584.008 դրամ պարտավորությունից 2.593.645 դրամն առաջացել է 27.09.2013 թ-ի թիվ 1002942 ստուգման ակտից:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ Վարչական դատարանի վարույթում է գտնվում թիվ ՎԴ/11054/05/13 գործը 27.09.2013 թ-ի թիվ 1002942 ակտն անվավեր ճանաչելու և վերացնելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Իր հերթին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝

ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը.»:

Վերոգրյալ իրավանորմերի դրույթներից հետևում է, որ քննարկվող դեպքում անհրաժեշտ է ձեռնպահ մնալ 27.09.2013 թ-ի թիվ 1002942 ակտի կատարմանն ուղղված գործողություններից՝ մինչև ՎԴ/11054/05/13 գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով, որի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, Հանձնաժողովը եզրակացնում է, որ ընկերության բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.08.2015 թ-ի թիվ 0219 որոշումը:

2. ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետին՝

«Հայոուսկոգեներացիա» ՓԲԸ-ի վերաբերյալ կայացնել հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին նոր որոշում՝ հիմք ընդունելով սույն որոշման Հանձնաժողովի եզրակացությունը բաժնում բերված փաստարկները և վերլուծությունը:

Հանձնաժողովի նախագահ՝

  
  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ